լութիւն գտնեմ, այն ատեն ընդարձակ հաշտութիւն մը պիտի հրատարակվի:
Սպասենք:

Վայրկեանն վայրկեան հշտերու կը սպասենք, թե՛ ցամաքն ու թե՛ ծո-
վեն... պալանով դալիք հշտը շունինք:

Մեկ երկու օրի ի վեր դրույց կը պատի, թե՛ Անդղիս նավատորմիդը նե-
ղուցեն մահը է, թե նորին ելիր է, թե կտքը դարձյալ մտեր է, թե վերջը նորին
ելիր է: Եթե այս դրույցներուն ամենն ալ իրավ են, ըսել կըլլա, թե Անդղիս
նավատորմիդին հրամանատարը հրահանգ ընդունած է իր կառավարութենեն,
որ պարապ շնտի ու նեղուցին մեյ մը մտնե, մեյ մը կ'ընն:

Տար աստիճ, որ սա նավատորմիդին սպասելու տեղ մը որոշվեր ու
մենք ալ դիտու ցավեն խալսեինք:

Ընթե՛րցող, տարիս մը ի վեր է այս նավատորմիդին խնդիրը դուխնիս
ուռեցուց:

Նավատորմիդը նախ և առաջ Պեշիքա եկալ: Իր գալուն հետեյալ օրը
խորհրդարանին մեջ հարցում մ'նշավ. — նավատորմիդը ինչո՞ւ Պեշիքա գնաց:

Լորտ Տերպի կարծելով, թե նավատորմիդին Պեշիքա սպասելը ազնի
տպավորութիւն չըրավ ժողովրդեան, հրաման ըրավ, որ Մալթա երթա, և
գնաց:

Հետեյալ օրը ա՛ն քեզի հարցապնդում մ'ալ.

— Նավատորմիդը ինչո՞ւ Մալթա գնաց:

Լորտ Տերպին այս հարցապնդումին վրա նորեն Պեշիքա զրկել տվավ նա-
վատորմիդը:

Նորեն հարցում մը.

— Ինչո՞ւ նավատորմիդը Պեշիքա գնաց:

Ա՛լ մարդու համբերութիւնը կը հատնի, մարդի՛կ, ըսես իրենց, սա նա-
վատորմիդը ձերն է, նավատորմիդ ըսածդ ալ մարգագետնի մեջ շալակի, ալ

ծովու վրա. տեղ մը որոշեցնք ու հոն մնա: Այս չքրին, այլ միայն հարցապնդումով մարդը շվարհացուցին մինչև հիմա:

Շատ հավանական է, որ այս անգամ ալ հարցապնդումներ եղած ըլլան, թե ինչո՞ւ նեղուցնն մտեր է, թե ինչո՞ւ նեղուցնն էլեր է. Լորտ Տերպիի ալ հարց համեմտով, իրեն սպղմած հարցապնդումին համեմատ՝ նախատորմիղին մեյ մը նեղուցնն էլնելու, մեյ մը մանելու հրաման պրկած ըլլա, և այս է պատճառը, որ նախատորմիղը մեյ մը ներս կը մտնե, մեյ մը դուրս կելնն կոր:

Տեսնենք, սա կատակերգութեան վերջը ո՞ր պիտի երթա:

...

Չմտնանք բռնու, որ Անգղիա նախատորմիղին պես մենք ալ շերքեզներն՝ սեխնք, որոնց համար շներ կրնար կոր բնակելու տեղ մը գտնել:

Սմբուպաչի կողմէն դուրս ելնեն անոնք, կրտեն: Կառավարութեանը Սմբուպաչի կողմէն քրեկէ կուտա և Ասիա կողմը կը գրկել:

Ասիա կողմէն ալ շներ ուզեր, կրտեն:

Ո՞ր գրկենք:

— Սմբուպաչի և Ասիայի կողմերը մի՞ գրկեր տե, սրբիչ ո՞ր կողմ կուզեր նն՝ գրկեցեր: Փառք տատուծո, տեղ շկա չի՞ չա:

Հարմանալին հոն է, որ օսմ. երեսփոխանական ժողովն՝ ալ շկացով չար վերջին նիստերնն մեկուն մեջ սրտուծ մը սալ այս մասին:

Լսածնուս նաշիլով՝ մեր աղջկնն ալ բունի մը կրտնալոր ամեն, ս. պատրիարքին երթալով, աղաչնք են աղաչել Ր. Դուրք, որ հաշարնակ գշուղերն ալ շքրկվին:

Ըստ մեզ՝ այս առաջարկութեանը պարտալ բան է:

Կառավարութեանն իսկ եթէ գրկել ուզն՝ շերքեզները շնն երթար, ինչու որ հաշարնակ գշուղերուն մեջ գողնալու բան շմնաց: Իսկ եթէ կա՝ այն ատեն ալ քյուրտերը շնն թողար, որ շերքեզները մտակնան, որովհետե իրենց շահուն կը դաշի...

...

Գիվանապետներ, թաղապարներ, կայսեր, ամենքը միտերբան «Քրիստոնեից վիճակին բարվորում» կրտեն, ի վերա այսք ամենայնի ես իմ վիճակիս մեջ բարվորում մը շնն կրնար կոր տեսնել: Արդյար ինձի՞ այնպես կուզա կոր, որովհետե կրտեն՝ թե մարդս որչափ ալ երջանիկ ըլլա, դարձյալ իր վիճակնն դժգոհ կըլլա. արդյար նախանձելի վիճա՞կ մ՝ունիմ, կրտեմ կոր երթնն ինչնիրմես, սա մտածութեամբ՝ թե գիվանապետները իմաստուն մարդիկ են, և հարկավ, իմ վիճակս ինձմե աղեկ պիտեն:

Քայց ոչ, սկեպտիկությունը մեկդի, իմ վիճակս պուլլարի մը վիճակն
ազեկ չէ:

— Սթե աչդպես է, քրիստոնյա չես: Քանի որ քրիստոնեից վիճակի բար-
ժոքում կըսեն և քու վիճակդ չեն բարձրեր, ըսել կըլլա թե՛ կա՛մ վիճակդ
բարձրքելու պետք չունի, կա՛մ քրիստոնյա չես:

Իմ վախս ալ ան է. վիճակիս բարձրումը իրենց ըլլա, քրիստոնեություն
մը ունեի՞ դոնն ան մեզ շխաղա. թերևս ապագային պետք կըլլա... Թուսիս:



- Տոբթոր Ա...ք կը տեսնե՞ք կար:
- Բնամ տեսած չունիմ, կերեա որ պահպանած է:
- Ինչո՞ւ:
- Վախեն:
- Չերբե՞ղ է, որ վախեն պահպանի:
- Չերբեղ չէ, քայց շերտերն ամբողջ մարդ մեռուց այս ձմեռ:



Մեծ. Համբարձում էֆ. Աշաճաճյան.

Տիրաւոր բառը, որ հայոց համար հաճախ կը գործածես, սահմանադրու-
թյան և ազատութեան դարձա մեզ խիստ անախարժ կը հնչի կոր ականջիս,
որովհետև գերիներու, ստրուկներու և շունչերու համար կը գործածվի ընդհան-
րապէս այդ քու սիրած բառը:

Ներկեցիր համարձակութեանս, քայց կը խնդրեմ, որ եթե կարելի է, պզտիկ
զոհողութեան մը ընելով՝ այդ բառը չգործածեր այսուհետև հայոց ազգին հա-
մար:

Որով մնամ ստաշիան պես
Հ. Հ. Պարոնյան



- Ի՞նչ է, ի՞նչ կա, ի՞նչ կըլլանք կոր, ի՞նչ է եղեր:
- Բան մը չէ, պուլլար ազգիկ մը:
- Ո՞ւրից արիք:
- Աճի Չեղմի մահալիպիճիին խանութին:
- Մահալիպիճիին աղջի՞կ ալ կը ծախի կոր:
- Ոչ, շերտեր մը հափշտակեր է եղեր ու...
- Անկարելի է:
- Տանիմ ըսելնի...

— Մտա է:

— Հսելնիքին քա...

— Սխալ է:

— Քանի մը պուղարներ տես...

— Ջրդարտութուն է:

— Տեսնո ու առիք են:

— Չիմ հալտար:

— Ինչո՞ւ:

— Մեզա ըսե, իսլամ մը անանկ բան կընե՞, աղա՞ ես:

— Ինչո՞ւ:

— Քասթանպուլուի երևափոխան Մուսթաֆա էֆենտին անցյալ նիստին մեզ

ըսեր է, թե շիրքիցները իսլամ ըլլալով, սնրադարձութուններ չեն կրնար ըրած

ըլլալ, հետևաբար իրենց վրայոք պտտած զրույցները զրպարտութուն են:

— Սթե ալդպես է, շեմ պնդեր, թերես աղջիկը գողցած է դշիրքիցն:



Միտքս բան մը կտ, շնուցած հարցունեմ:

— Ո՞վ դուք, որ գրամանիչ կաններ, վերջը ի՞նչ կրնիք այդ գրամանիչ-

ները. ես առածներս կը պահեմ կոր, սրովհետեւ մարդ շունիք կոր:

Սրեկ Թերսհանիկի գրամանիչը¹⁷ չէր անցնիր. — Ինչո՞ւ. — Սրովհետեւ կեղծն

է հրատարակիչը եղերս Այսօր ալ Քաթալյայիւնը¹⁸ չին ընդուներ. — Պատ-

ճա՞ռ. — Սրովհետեւ կեղծն է աղվիք: Վաղն ալ Շիրքիթի¹⁹ և կամ ուրիշ տեղի

մը գրամանիչը շպիտի քալե. — Ինչո՞ւ. — Սրովհետեւ կեղծը պիտի ելնե:

Ճաթելու կետը այն է, որ կեղծը ելած ըլլալուն համար իսկն ալ չեն ըն-

դունիր, շքնդունելին դատ կեղծն իսկին կամ իսկը կեղծին դատապանելու հա-

մար դուրսութուն մ'ալ չեն ցցուներ, որ ես ալ քովս գտնվածներուն կեղծ ըլլա-

լը կամ ըլլալը հասկնամ: Սատանան առնե մեղքիքին, քայց ինձ այնպես կը

թվի, թե՛ դիտմամբ չեն ցցուներ կեղծին ու իսկին մեղի տարբերութունը, որ

իրենց հանածներն ալ շքնդունին:

Եթե այս ընթացքը հաշոգի, վաղը ես ալ հանուն Մասիսի ապարանի

50.000 դուրուշի գրամանիչ պիտի հանեմ շրջարկության. և ամենքը բշեղին

եսքը՝ «էֆենտիմ, ատունց կեղծն են շիներ» քսելով, մեկն ալ շպիտի ընդունիմ:

Եվ մինչև հիմա շքնիւս կարծեմ ըիջ մը անխահեմութուն է:

Հիմա հարցուք ինձի թե՛ մինչև հիմա ի՞նչ ըրեր ե ի՞նչ կրնես:

Առաքալին²⁰ ըսածը կրնեմ կոր. «Ալ ընդ լացողս, խնդալ ընդ խնդա-

ցողոս:

Ըսենք թե՛ Մուստաֆա էֆենտին կը տեսնեմ, որ տխուր նստեր ու կը մտմտա, ես ալ դիմացը կը նստիմ տրտում ախար ու կսկսիմ մտմտալ: Անդին կերթամ, կը տեսնեմ, որ Տանշտ աղան Բեթրոյին հետ ձեռք ձեռքի տված կը պարենն՝ կամացուկ մը Բեթրոյին քովը կերթամ ու «ձեռքդ ինձի տուր: կըսեմ, ձեռքն կը բռնեմ ու կսկսեմ պարել:

Իսկ եթե մեկը տեսնե զիս՝ և հարցունե, թե ինչո՞ւ կուրախանաս, կը պատասխանեմ.— ուրախանալու բան մը չունիմ, խնդացողներու հետ խընդացած ըլլալու համար է, որ կուրախանամ:

Տեսնե՛նք, առաքչալը ի՞նչ վարձատրութիւն պիտի ընե ինձ՝ յուր խոսքը կետ առ կետ գործադրած ըլլալու համար:



Հրազրաց մեզ նախատորմիղի վերաբերյալ ծանուցում մը կարդացի՞ր: Ընթերցող. Պեշիքաչի ու Կ. Պալատ մեջտեղ նախատորմիղ մը կարսված է, գտնողին մեծ պարգև պիտի տան եղեր:

Մինչև այսօր աչք նախատորմիղին ո՛ւր ըլլալը չսիրտնալնուն վրա կը դարձանամ կոր. ևս ծանուցումը կարդալուս պես ո՛ւր ըլլալը խելուն գտա:

Ըսե՛մ ձեզի, թե ո՛ւր է աչք կորսված նախատորմիղը, պարգևը առնել կուտա՞ր ինձի:

- Այո՛, ըսե՛, և շո՛ւտ ըսե:
- Զերքեղներուն քովն է:

5 Փետրվար 1878

Անդդիտական նախատորմիղը վերջապէս գտնվեցաւ:
Կղզիներուն²² առջեւ եկեր նստեր է... առաջ գալու կամչնա կոր:
Ինչո՞ւ եկավ այս նախատորմիղը:

Հանդիստ եղիք, շարութեան ընկու համար եկած չէ, բարութեան ընկու համար ալ եկած չէ, միմիայն Արևելքի միջ յուր պատիվը կուտիլ շտալու համար եկած է եղեր:

Անդդիտ կառավարութեան ըսեր են եղեր թե՛ եթե քու նախատորմիղդ Պօլիս շկարենաս մտցնել, մեծ պղտիկութիւն կը հրավիրես վրադ:

է՛հ, ընթերցող, մեկը քեզի առանկ խոսք մը ըսեր են՝ հարկավ դուն ալ պղտիկ մնալ չէիր ուզեր ա՛:

Կըսվի թե Գաղղիո և Իտալիո կառավարութեանց ալ նախատորմիղները քիչ օրեն պիտի գան, որպեսզի անոնք ալ պղտիկ չմնան...

Ի՞նչ հարկ կա աս ու ան պղտփի ձգելու... Խույլ ատու է որ մեծեան:
Գոնե հումանիան, Սերվիան ու Սե Լեռն ալ՝ պղտփի շմեալու համար՝ նա-
վատարմիդի տեղ տասնական կտոր կտոր դրկեն:

Ռուսիան ալ ըսած է եզեր, թե՛ ի՞նչ նպատակով որ Անդրիս նավատոր-
միդը ներս մտավ, նույն նպատակով ես ալ պիտի մտնամ:

Ինձ ալ հրամմե:

Ող զուք, որ սքիշի քով երբեմն պղտփի մնացած էք, և որ կշտներկնուղ
մեջ բնավ մնկու մը քով պղտփի իջնու շեք ուղեր, ելե՛ք ամենքնիդ ալ հոս
եկեք:

Ըսելիք մնա՞ց:



Օսմ. երեսփոխանական ժողովո առժամանակյա կերպով դադրելուն վրա
ի՞նչ կարծիք ունիք:

Ես շատանց ի վեր, ատոր քայլած օրեն ի վեր, կը դուշակիի, որ այս
ժողովն օր մը կա՛մ երեք ամսվան համար պիտի դոցվի և կա՛մ քուրբովին
պիտի խափանի:

Հարցուք հիմա ինձի թե՛ ի՞նչպես կը դուշակիիք:

— Ի՞նչպես կը դուշակիիք:

— Որովհետեւ, կըսեր ինքնիրմես, Փատրոնիս մեջ ոչ թե նախարարի մը՝
այլ օտանիի մը դեմ եթե երկու խոսք ընեի՝ իսկույն ամիս մը կը դադրեցնեին
Փատրոնը. իսկ եթե քիչ մը ծանր կոխեի՝ կը խափանեին զայն: Ասուք ինք-
նիրենս ըսելիս ետքը սա եղբայրացութեանը կը հանեի, թե՛ քանի որ այս
երեսփոխաններն ամանք շերքեղներուն դեմ, նախարարներուն դեմ ծանր ու
երկար հարեք կը խոսին, անպատճառ չբարբոսին պիտի դոցվի օր մը: Մինչև
անգամ կըսեր մտաք, թե ասանց տարեկան երկու հարյուր թուղթ ալ արվելու
չէ, որպեսզի հաջորդ երեսփոխաններն ազատախոսության եսանդին քիչ մը
չափավորեն՝ մեզնե օրինակ տանելով:

Մինչդեռ կատարութեանը դարբ, նավատարմիդ և այլն կը դրկեն հոս
իրենց շահն ու պատիւը պաշտպանելու համար, Զամարճյան մեծիմաստ
պատվելին ալ բուռատարմիդ մը կը դրկե Փուլեջին դեպ. նոր-Պեյի Նախնական
և Կրթական Քրիստոնեականները որպես թե պաշտպանելու համար:

Զամարճյան պատվելին ո՛րչափ ալ կեղծե թե՛ դեր. նոր-Պեյի Քրիստո-
նեականներուն պաշտպան հանդիսացած է, դինր ճանչցողները չեն խաբվիր-
և գիտեն թե՛ այդ Քրիստոնեականներուն վնասելու նպատակով է, որ մեծի-

Ճաստ Պատվելին՝ դանոնք կը պաշտպանեն ըստ առածին թե՛ Պատվելինը պաշտպանված դրքերը գոյրացնելին կը մերժվին:

Կըսեն թե՛ Պատվելին շատոնց ի վեր առիթի կապած եզեր գեր. Նար-Պելին շարիք հասցնելու համար. ստատնան ներկայացուց տախթը, Պատվելին ալ շիտիցուց դաշն:

Կըսովի նաև թե՛ գեր. Նար-Պել միտք ունի դատ բանալ և իր Քրիստոնեա-կաններուն տպագրութեան ծախքը Պատվելինն պահանջել:

Որկու տող ալ բժշկական:

Ավետիս անոնց, սրոնց սրովայնը խիստ պինդ քլլալով, զորովոր լուծողական գիզերու կարտառթումն ունին:

Այս օրերս անանկ զորովոր լուծողական դեղ մը գտնվեր է, որ ծայրահեղ որովայնասպինդ մարդոց անգամ ազդեցութեան կընեն կար: Այս գեղը հակասակ իր զորութեան, շատ ալ աժան է, այնքան աժան, որ պետք շունեցող ալ կընա աննել:

Արդ, այս գեղը սրիշ բան չէ, եթե ոչ կովու միս, որ այս օրերս օխան ի դին 100 փարաչի կը ծախվի գրավաճառներու քով... մտավաճառներու քով պիտի ըսնի:

100 փարա տալով, մարդ կրնա ասուք քոան հոգիի լուծում տալ, մինչդեռ եթե դեղագործի երթաս՝ 8—10 դրուշ պիտի տաս մեկ հոգվո համար, և այն դեղն ալ շատ անգամ օգուտ չընելու իմ ըսած գեղս անանկ երկու երեք անգամ լուծում ավողնելին չէ, այլ շարաթներով, ամիսներով և եթե առաջը շահնես՝ տարիներով կը բշն...

Աղքատաց համար աղվոր տախթ... ձեռքն փախցունելու շար:

Տեսարանն է հմին-հոնյու²³:

Հուլնին մեկը բաղմութեան մեջ յուր ձեռքը սխալմամբ բովինին բաճկոնին դրայանը տանելով՝ ժամացույց մը առնելու միջոցին կը լուծվի:

Իսկուչն ոստիկան մը կը հասնի:

— Ինչո՞ւ կը բռնեք կոր. ի՞նչ ըրի ես, կը պոսա հուլնը:

— Առանց ամշնալու կը պոստ՞ս կար ա՞լ:

— Ինչո՞ւ շախարի պոսամ, թող ավիք օձիքս, ի՞նչ ըրի ես...

— Ի՞նչ պիտի բնես, սա մարդուն ժամացույցը կը գողնալիք կոր, անսո՛հ համար բանցիներ:

— Անտանկ է նն՝ տտոնք ինչո՞ւ շեք բաներ կոր, քսալ գողք, շուրջը գանձած շերտնեկներն ու պաշարպաղաքները ցուցքնելով:

— Լսո՛՛:

— Թո՛ղ ավեր օծիրտ, ճանդ՛՛մ, ևս այ կամա՞վոր ևս:

— Քաղի՛:

— Աս ի՞նչ անիրաւութեան է... հալաւարութեան կրսնն և խարութեանը շեն զերցըներ:

Ոչ ոք կարե Երկուց տեւանց ծառայել:

Մենք շատ ժիր մարդիկ ըլլալու ենք, որ այսօրվան օրս երկու տերերու կը ծառայենք, և անտանկ տերերու, որոնց բնավարութեանն իրարու ա՛ջնքան ներհակ են, որքան որ շուրջ կրակին կամ որքան որ Արեւելյան Մամուլը Չամբռնյան պատվելիին: Թրինակի համար, եթէ մին հոս եկուք ըսն՝ մյուսը՝ անդին դնա կըսեն, եթէ տնդիինք էլ ըսեն, ասգիինք նստե կըսեն: Ասոնց որի՛ն հրամանք կատարել, որի՛նք շկատարել, ո՛րն ընդունիլ, ո՛րք մերժել...

Մտաայել կըսեմ նե՛՛ անտոնց սպասաւորութեան կընենք ըսել շեմ ուզեր. սխալ շհասկցովի.— ըսել կուզեմ թե՛ և ոչ մեկան սիրուք կտարելու համար՝ հետերնին անուշութեամբ կը վարվինք, ինչպէս որ քաղաքավարութեանն այ այսպէս կը պահանջեն:

Մին ինձի կըսեն.

— Գնա սա մարդուն ըսել, որ հոս դա:

Հաղիվ թե կերթամ ըսելու՝ մյուսը հտեկա կը կանչեն ու կը հրամայեն.

— Գնա՛, ըսն սա մարդուն, որ հոս շլու:

Հիմա դուն իմ տեղս ելիր ու դորժ տես նայիմ:

Ի՛նչ ընեմ, ես ալ երկուքին ալ խոսքը հալաւարութեամբ տեղը տանելու համար կերթամ այդ մարդուն կըսեմ.

— Եթէնտիմ, նախ եկուք, հետո մի՛ դար, ու նոր հրահանգի սպասու:

— Սս ալ քու տեղը ըլլամ նե՛՛ ո՛րք քեզի ավելի շահաւոր է՝ ան կընդունիմ, մյուսը կը մերժեմ:

— Ահա դժվարութեանն ալ հոտ է: Եթէ երկուքին որին ավելի շահաւոր ըլլալը գիտնայի, քսածդ մինչև հիմա կընենի. առայժմ երկուքին ալ վնասն ուրիշ բան մը տեսած չունինք:

Ի վերա այսր ամենայնի, ինձի այնպէս կը թվի, թե քանի մը տեր ալ ավելի ըլլա նե՛՛ պիտի կտրենամ ծառայել:

Ձեզի ի՞նչպէս կը թվի:

Պարոն Կլատսթընին պես ես ալ ամեն օր մեյ մեկ հարցում պիտի ընեմ:
Պատասխան տվեք...

Մայրաքաղաքիս լուրս կառավարները աղգային քաղաքապետ զինվոր գրված են, թե քաղաքապետ զինվորները կառավար եղած են:

Քանի մը օր առաջ հիսունի շափ կառք տեսա իրարու հոռու, որոնց վարիչներն էին քաղաքապետ զինվորները:

Մեկին ի մեկ առջեցա մնացի, քանզի, թեպետ և ձիավար զորք տեսած էի, քայց կառավար զորք տեսած շունեի Թերես, կըսեի ինքիբնես, այս խոսքերը նոր կազմված ըլլան:

Ի՞նչ ընելու համար:

Պատերազմական հմտութեան շունենալովս հանդերձ՝ վերջապես որոշում տվի, թե կառքով պատերազմի շերթցվիր, անպատճառ ուրիշ բան մը ըլլալու է, և կառքին ետեկն դացող մեկու մը հարցուցի.

— Ո՞ր կերթան այս կառքերը:

— Զդիտեմ:

— Ինչո՞ւ չգիտես:

— Լենդին գնա, պե մա՞րդ:

— Ինչո՞ւ անդին երթամ:

— Ծս ցաղ շունիմ տե, երկու սահաթ կայնիմ քեզի խո՞սք հասկցնեմ:

— Ինչո՞ւ ցաղ ունիս:

— Երկար քրիս:

— Ինչո՞ւ երկար քրի... ըսեք կողաշեմ, այս կառքերը ո՞ր կերթան կոր:

— Էֆենտիմ, մուհաճիբ կը կրեն կոր:

Մուհաճիբ կուգա, մեր կառքերը կառնեն, մուհաճիբ կերթա, մեր կառքերը կը գործածվին, միրափոր կուգա, մեր կառքերը կուղեն, վիրավոր կերթա, մեր կառքերը կը տանին. հաց կուգա, մեր կառքերը կուգան կառնեն, հաց կերթա դարձյալ մենք կը տանինք. հասկցա՞ր հիմա:

— Հասկցա, շնորհակալ եմ. աղեկ ա՛, առուտուք թացված է ձեզի... ձրի շեր աշխատիր կոր ա՛... ձրի ալ ըլլա նե՛ ի՞նչ վնաս ունի եղեր... նեղ օրերու մեզ ամենքնիս ալ հայրենյաց օգնելու ենք:

— Անանկ է յա՛...:

— Դուն ո՞ր կը նստիս կոր. կտորք ո՞ր պիտի տանիս վերջը:

— Պեյօղլու՞:

— Կառք անանկ ալ պարտալ պիտի երթա անանկ ալ, ես ալ նստիմ մեզք ու Քերտ ելլամ նե՛ վնաս մը ունի՞ քեզի:

— Աս ո՞րչափ յադր մշուշտերիներու հանգիպեցանք այսօր:

— Հայրենյաց օգնելու է, տղա՛ս:

Ըսելու շնորհ, ճարտը ծառ ծառ կրկան նայելով դնացի
Վերջապես անձնօրրության ու գոհուածության չկա սա արապանիեն-
քուն բով:

13 Փետրվար 1878

Բարե:

— Բարի եկար, պարոն Եփեար, այսօր գործի չգացի՞ր:

— Զգացի, երկաչիք ալ շունիմ:

— Ինչո՞ւ:

— Գործ չմնաց որ երթամ, վարպետս ճամբա տվալ:

— Ի՞նչ պատճառի համար:

— Ազնի ծառայած ըլլալու համար, ինչու որ ճամբա տված օրն ըսալ:

Քե քու ճատուցած ծառայութեաններեդ մեծապէս շնորհակալ եմ: Աւտի փա-
փաքելով, որ քեզի մեծ վարձատրութեան մը ընեմ, որոշեցի որ բովես հետա-
հաս և աչքս շահսնա քեզի:

— Հիմա ինչո՞վ կգրագիս:

— Օրվան խնդիրներով:

— Խոսե՞լ:

— Եթե քիչ մը համարձակ խոսելու, ըլլամ՝ շեռ վանտեր ա՛:

— Մի՛ վախնար:

— Հաս իմ խոստը՞ կարծեաց՝ օրվան կարեւորագոյն խնդիրներն մեկն
ալ առ է, թե քանի որ տաանց պարտերս դիզելու, ապրիլը անկարելի է մեզ,
զանե իմատութեամբ վարկելով պարտը չի վճարելու. գիտութեանը քորկեց-
նենք մեր պա՛վակաց:

— Աս ալ գիտութեան է, պարտը շեռ տար, կը լմնա կերթա:

— Աչեպէ՛ս չէ, վարժարանի հոգաբարձութեաններն ալ ձեզի պէս կարեւ-
րութեան շեռ տված աչս գիտութեան և շատ սխալած են:

— Ինչո՞ւ:

— Անոր համար որ, եթե ֆրանսերենի կամ անգլիերենի տեղ աչս գիտու-
թեանը սորվինն մեր երիտասարդները՝ իրենց պարտատերերը տեսնալու
պէս չէին շվարեր մնար. էին սկսել քննութիւլ, ալ համողիչ խոսքերով դահ
կրննին իրենց պարտատերերը:

— Բայց պարտը չվճարելու գիտութեանը սորվեցնելու տեղ, եթե պարտը
չգիզելու արհեստը սորվեցնենք՝ ափելի ազնիկ ըրած չե՞նք ըլլար:

— Աչ, պարտը չվճարելը ափելի շահավոր է... աչս պարտը չվճարելը նոր
քան մը չէ: Քրիստոսն իբր շորս հարչուք տարի առաջ է. քրիստոսնութեան

շատ հին է... բայց ի՞նչ օգուտ, որ բրիտանականացուին աչտօր կը պաշտպանվի
և պարտքերնին չվճարողները երեսի վրա կը ձգվին... Ով որ ամպերուն՝
վրայնն անցած է, տեսած է հարկավ Սթրեբսիատը²⁶, որ կաղաչի Մոկրատա,
որ պարտքը շահատույանելու արհեստը իրեն ուսուցանի:

— Թող այդ Սթրեբսիատը անվրոն հասնի:

— Ըսել է թե՛ շատ հին ասեններու մեջ ալ պարտք չվճարել կա եղեր:
Ճիշդնս մեր խմբագիրներն ամանք կը պնդեն, թի իրենց միջոցավը տարած-
վեցավ այդ գիտութունը:

— Ասանկ ալ գիտութուն լուծ չունի:

— Մոկրատի պես մարդու մը դիմելով՝ անկե խորհուրդ հարցունելը կը
հաստատեն, թե այդ գիտութունը կարծվածին շուք դուրին բան մը չի:

— Իմ խելքս չի հասնիր գրամական զործերու, Մալիչին²⁷ դնա՛, անկեյ
կատարչու տեղեկութուն կառնես:

— Արիշ ի՞նչ ունիս:

— Սա ցավալի լուրն ունիմ, որ էրդրումի մեջ քանի մ'ամիսեն մտրդ
չգիտի մնա:

— Ո՛ր կերթան կոր:

— Լեվենթի Թղթակցին նայելու որ բլլա, ամիսը բնակիչներն տար
հաղար հողի թիֆուսն կը մեռնին եղեր: Քաղցին մեջ ուխտն հաղար հաշ-
վելով, ըսել կըլլա թե՛ ութ ամսվան մեջ կարինը քոչորովին պիտի պարպվի:

— Լեվենթի գրածին մեջ սուտ չկա՞:

— Կարելի է որ չլլա, բայց ո՛րչափ կա, խնդիրը հոն է:

— Երկու զերս զեղչներ:

— Գեշ չլլար, որովհետև Լեվենթին քրածը քիչ մը անգթութուն է կար-
ծեմ. գրիչը ձեռքը անկել և ամիսը տասը հաղար հողի ջարդել:

— Մեզի վերաբերյալ ի՞նչ լուր ունիս:

— Զեղի վերաբերյալ մի... գարիին դինը բարձրանալու վրա է:

— Գարին ի՞նչ վերաբերութուն ունի մեզի, թո՛ղ ավտորիացիները մըտ-
մրտան, որ պարեջուր կը խմեն. թո՛ղ ձիերը մամտան...

— Մենք ալ մամտանք, որովհետև խահվեի տեղ դարի կը գործածենք,
հիմա ի՞նչ պիտի ընենք:

— Ասոված ողորմած է:

— Արիշ ի՞նչ ունիս:

— Քսահ մը լեցան Թերսիանեի կեղծ պիլիթ ունիմ:

— Քաղաքական...

— Քաղաքական... քաղաքական սա ունիմ, որ սա կախիլը լմնալեն վեր-
ջը դիվանագետներուն յուրաքանչյուրին միջ մեկ մեհյան պիտի կառուցանեմ:

ամենուն արձաններն այդ մեհայաններուն մեջ պիտի կանգնեմ, և գլուխս բացած, անոնց երկրպագութիւնն պիտի քննեմ: Ասոնք մեր գիտցած ու հանչցած շաստվածներն շատ վեր են: Աստվածներուն կենդանիներ կը զոհեին. ասոնց մարդ կը զոհենք ու հարչուր հաղարհերով կը զոհենք: Ես ասոնցմէ վախցաւ: Մնաք բարով:

— Ի տեսութիւն:

15 Փետրուար 1878

Գեազանախորհուրդն²⁸ ո՞ր պիտի գումարի:

Լորտիբու ժողովին մեջ Լորտ Տիրակի ըսեր է, թե այս խնդիրը քաջ միտաւզ գնացած չէ:

— Թուրքիս պես, կըսեն հիմա մեր թշնամիները:

Բայց ինչո՞ւ այս խնդիրը քաջ միտաւզ գնացած չէ մինչև այսօր, կամ եթե գնացած չէ, դո՞նե քաջ մը ետ ալ գնացած չէ. ուր որ էր՝ հոն կեցած է, խնդիրը ի՞նչ հանցանք ունի. անդամալուծեցին խեղճը. ի՞նչպէս կրնա շարժի:


Հատ մեզ՝ խնդիրը ուր որ է, գեազանախորհուրդը հոն գումարելու է:

— Ո՛չ, Ռուսիան կառաջարկէ եղեր գումարել այնպիսի երկրի մը մեջ, որ Արեւելյան խնդիրն ընալ շահ չունենա:

— Եվ չե՞ն կըցած մինչև հիմա անանկ երկիր մը գտնել:

— Ո՛չ:

— Հույսստանի մեջ գումարեն թող, որ ստալճմ ընալ շահ մը չունենալեն դատ բազմական վնաս ալ տեսալ:



Շարաֆն արսորանաց շարաֆ է:

Արտահանա հրամանատար Հչուսիին Սասրի փաշան մշտնջենալոր բերդարդելութեան դատաւարաւելու է:

Որչափ ազնկ կըլլար եթե սա մարդը Արտահանա հրամանատար շրթած բերդարդելութեան դրկվեր... իր երեսին այսչափ վնաս չէինք տեսներ:

Անգամ մը խարվեցանք, և վնասվեցանք, երկրորդ անգամ չվնասվելու ամար հիմակվրն խոհեմութեան ձեռք աննելով, ասոսպրիլու ենք բանտարաններուն, որ ազնկ հակադրութեան ընեն վրան, որպեսզի միգուցի Արտահանա պես այս բերդն ալ սարսալելով մեկնի...

Բերդերու մեջ պահվելու որչափ մարդիկ բերդեր պաշտպանելու դրկեցինք...

Անդրխահան նախատորմիդին Կղզիներուն առջեկն էլնելուն ու Իզմիտի ծովածոցը կրթալուն պատճառը իմացա՞ր:

— Անցլալ օր գրած էինք ա՛, Թուսիո բանակը քիչ մը կտ քաշել տալու համար շհնուացա՞վ:

— Առջի օրը անտնկ էր, բայց այսօր սնանկ չի: Իզմիտի ծովածոցը Կղզիներնն ավելի հարմարութիւն ունի կղեր նախատորմիզը պահելու...

Ով Անդրխա, հպատակներդ պաշտպանելո՞ւ համար համրա հանկեր նախատորմիզդ, թն նախատորմիզիդ հարմար տեղ մը փնտտելու համար:

Նթն այս վերջինին համար է, Անդրխա հպատակներն այսօրվրն Իզմիտ երթալու են, սրովհետե հոն ավելի հարմարութիւն ունին պաշտպանվելու: Ա՛յ նախատորմիզն իրենց կտեկն շպիտի դտ, ալ իրենք նախատորմիզին կտեկն պիտի երթան:



Վնախ և առաջ պետք է գիտնալ, թն Դարդանելն սրո՞ւ ձեռք պիտի մնա: Այսպես կը խոսի Պիտմարք իշխանը. այսինքն սրո՞ւ ձեռքը Դարդանելի վրա պիտի մնա:

Այս խնդիրն ալ նոր երեան ելալ:

Մենք՝ ներկա պատերազմը քրիստոնեից վիճակին քարելալությանը համար կարծելով, ինչպես որ դարձյալ ոչնպես կը կարծենք, և Դարդանելին ալ քրիստոնյա ըլլալը մեր մտքնն անցած շրջալով, առանկ հարցումի մը բնավ չէինք սպասեր, և այնպես համոզված էինք, թն անո՛ր ձեռքը պիտի մնա՝ որու ձեռք որ մնացած էր մինչև այսօր:

Մեր կարծիքը ծուռ, մեր համոզումը սխալ է կղեր: Պիտմարք իշխանին խոսքնն աս կը հասկցվի, որ Դարդանելն ալ այս օրերս կնքվեր ու քրիստոնյա է կղեր...

Ջրույց կը պտտի, թն մեր նախատորմիզն այ կը համոզեն կղեր, որ քրիստոնյա ըլլա:

Թեպետև այս դրույցն անհավատալի է, բայց այնպիսի դարու մը մեջ, որ ամեն մարդ կրոնի ազատութիւն կը վայելի, անհուսալի բան մ՛ալ չի:



- Մարդ աստուծո, բերանդ բաց ու երկու խոսք ալ ինձի հետ ըրի:
- Թեզի հետ ի՞նչ խոսիմ, կնի՛կ:
- Ի՞նչ պիտի խոսիս. Թագուկ տուտուին էրիկը ամեն օր իր կնկանց նոր լուրեր կը բերն, կը նստի հետը կը խոսի բոլիթիրայի վրա, դուն բան մը չես

զսեր, հազար ու մեկ խոսքեր կը պատինն կոր... Մոսկոֆը եկեր է եղեր, նորեն գացեր է եղեր, ինկիլիպին տոնանման ատաներուն առջին է եղեր...

— Էքմեքճին աշտօր ալ հաց չըրաւ:

— Վերջեն Իզմիտ դացեր է եղեր...

— Էքմեքճի՞ն...

— Չէ, հանըմ, տոնանման, հիմա ալ Պարսաչի շուրերը պիտի երթա եղեր:

— Միան ալ քսաներկուքի ելեր է...

— Մոսկոֆ: ալ նորեն պիտի մանա եղեր...

— Ինչո՞ւ պիտի քուկին, կնի՛կ, գուն տանդ գործերը նայի:

— Ինչո՞ւ յոյտի խոտնովիմ եղեր... Ինկիլիպը մեղի խարեր է եղեր...

կըսեք թե՛ կնիկները խարող կըլլան. տե՛ս...

— Գարձյալ անանկ է յա...

— Ճանըմ, ի՞նչ կուզեն կոր ատներ:

— Ճանըմ, սեպի քի տուններնիս միտաֆիր մը եկաւ տե, խահալե մը հրամացուցինք, խահալեն խմիչին հարք՝ դինի ալ բնրեք կըսե: Գինին կուտանք, խնձոր ալ բերեք կըսե: Խնձոր կուտանք, կերակուր հանեցեք կըսե: Կերակուր կը հանենք, կը նստի կուտե, աակի վերջը՝ տֆրաչին թախըմը ինձի ավեք կըսե:

— Բա տեք սղարմյա, առ ի՞նչ տեսակ միտաֆիր է. ես զլլամ նե՛ շեմ տար, թող ելնե երթա:

— Ո՛չ կեղնե, ս՛չ ալ կերթա, քիչ մը ատեն ձեր տանը մեջ պիտի մնամ կըսե:

— Չեմ ընդունիր, մեյ մ՛ալ տունս մի՛ գար կըսեմ ու հետք շեմ տեսնվիր:

Աս ի՞նչ է, ամեն մարդ միտաֆիրության կերթա:

— Ամեն միտաֆիր մեկ զլլար ա:

— Հիմա առ մոսկոֆը սոֆրաչի թախըմ շունի՞ եղեր:

— Ունի ամա, կուզե կոր. ես մինչե սր ձեր տունը միտաֆիրության եկա նե՛ շատ ծախս քրի կըսե կոր:

— Թող չի գար, մե՞նք տավեթ քրիներ:

— Կնիկ, խելջոյ հասնիր ըսի յա՛, կարճ կը կապեն:

— Սա ֆիտան: առ վաղը շմոռտառ, նայե՛ որ խոտաւըռ աղեկ ըլլա:

— Մյուս ֆիտանդ ի՞նչ եղաւ:

— Մյուս ֆիտանա պատառ պատառ եղած է, բռնվելու տեղ շունի, շատ վրձակի մեջ է... ֆիտանիս վրձակը քիչ մը բարվորելու է որ...

— Պարտապ տեղը ծախս մի՛ ընեք հիմա, անոր ալ վրձակը կը բարվորի... Խոտաւըռը քոնկրեին մեջ:

Սրամիտ աղայք միշտ կը սիրվին:

Հայր մը առջի գիշեր իր վեց տարու տղան դեմն առնելով, Քրիստոսնեականե՞ն՝ մը սկսավ հարցումներ րնել անոր:

Շատ մը բաներ հարցնելի ու պատասխաններն առնելի ետքը՝ հայրը հարցուց.

— Ըսե նայիմ, տղաս, Քրիստոսը սպաննուղները որո՞նք էին:

— Քրիստոսը սպաննուղներ՞ըը մի:

— Այո՛:

— Քրիստոսնեականիս մեշ անանկ քան շիտ, հայրիկ:

— Քող չըլլտ, քրիստոնյա մը աշխարհի բանը չգիտնա՞ կըլլա՞ մի:

— Քյուրդերն սպաննած ըլլալու են, հայրիկ, չկրբեցներն ալ անոր հապուտները կողոպտած ըլլալու են:

— Ապրիս, տղաս, սքիկ օղի մը բն՛ր, ըսավ հայրը, և Քրիստոսնեականը դոցեց:

17 Փետրվար 1878

Ի՞նչ մեղքս պահեմ, ես աչս հաշտութեան պայմաններին ալ բան մը չեմ հասկնար կոր:

Հաշտութեան պայմանները՝ որք նախ Քըզանլըք պիտի որոշվեն, քիչ մը ետքը Ազրիանուպոլիս պիտի ստորագրվին, քիչ մ'ալ ետքը Այ-Սահֆանսո՞ պիտի կնքվին, մինչև սլոսթ ո՛չ կնքված են, ո՛չ ալ մկրտված:

Արգլոք Քըզանլըքի, Ազրիանուպոլսու ու Այ-Սահֆանսոյի օգը կավրե՞ կոր հաշտութեան պայմանները, արդյոք հիմա քաղաք մ'ալ հաշտութեան պայմաններուն համա՞ր փնտտելու պիտի ստիպվինք:

Ի՞նչ դժվար սակարկութեան է աչս, աստված իմ: Իմ դիտցածս ու անսածս՝ սակարկութեան մը կրկու խոսքով լմննայու է:

Օրինակի համար.

Տուր ձեռքդ ինձի:

— Առ:

— Գորտաաղի անկախութեան:

— Շատ աղեկ:

— Մերվիս ալ անկախութեան:

— Ատոր ալ բան մը չեմ ըսեր:

— Բո՛ւժանիտ ալ անկախութեան:

— Չեր ըսածք ըլլա:

- Պուլլարներու ինքնօրինութիւնն:
- Դեմ կեցած ունի՞նք:
- Չերքեզներու և քլուրդներու ալ հայութիւնն:
- Աստր ալ բան չենք ըսեր:
- Մնաք բարով:
- Երթաք բարով:

Լմնցավ, դնաց:
Քրզանլըքին մինչև Այ-Ստեֆանո հաշտութեան պայմաններ...

Իմ կարծիքս, հաշտութեան պայմաններուն վրա հաշտութենէն ետքը պիտի բանակցին, և այս բանակցութեանը մեր կարծածն ալիւի երկար պիտի լինէ, և այն ատեն միայն պիտի վերջանա՝ երբ մեկ հացը հարցուրնոց թուղթի մը առնուլ սկսինք:

Քանի մ'օրն ի վեր պատած ղրույցները:

- Կնիկ, ստրաղթույթն:
- Ի՞նչ ըսիր:
- Ստրաղթույթն, ստրաղթույթն:
- Ատ ի՞նչ է, ատ ալ նո՞ր հանեցիր:
- Բարի եկար ըսել է... քաբ բաժիվայեթի... քաբ բաժիվայեթի...
- Ա՞ս ինչ ըսել է...
- Քեյֆո աղն՞կ է. քաբ բաժիվայեթի, քեյֆո աղն՞կ է, քաբ բաժիվայեթի...

- Բաշա պիտի առնելք երեկ:
- Տենկի եկսթի, տենկի եկսթի, տենկի եկսթի...
- Ինչո՞ւ չստիր բաշան:
- Քազտա բահոթ, քազտա բահոթ...
- Եանըմ խենթեցա՞ր, ի՞նչ եղար:
- Ստրաղթույթն, ստրաղթույթն:

- Այս գիշեր ուտելիք չունինք:
- Թող չոճենանք, բավական է որ... տենկի եկսթի, քազտա բահոթ...
- Ստրաղթույթն:

- Զա տենկի եկսթին ձգն՞ ու դնա՞ բան մը առ ուտենք:
- Կնիկ, կեցի որվոնք սորվիմ, որ վաղը մյուս օր բարեկամները հոս մեզ ինչ են՞ քանի մը վարա վաստկինք: Քաբ բաժիվայեթի, բարի եկար, բաժիվայեթի, բարի եկար:
- Սրինէ հիմա խելրոգ ս՞ր էր...

- Աճելի եկա՛վ, կնի՛կ, այսչափ շուտ գալիքը մաքնս չէր անցնե՛ր:
- Ասկից վերջը սորվիս ու ստակ պիտի վասակիս հեն՛... վայ գլխուդ...
- Մի՛ վախնար դուն, անո՛նք շուտ շին երթար:

Պիսմարք բարեկամնիս կը պնդե, որ Գարգանելի խնդիրը խիստ մեծ ու ծանրակշիռ է...

Գերմանիս գործին չլար եղեր, որ Գարգանելի բանալին Թուսիս ձեռքը անցնի և ուզածին պես բանա ու գոցե անոր դռները:

Աղեկ ա՛, ասոր գյուրին համբան կա, բանալին թող դարձչալ մեր ձեռքը մնա, և առաջվան պես, ձեր ուղածին պես բանանք գոցենք, կամ ո՛չ բանանք, ո՛չ ալ գոցենք:

Ամուսնութեանց թի՛վն օր քան դօր նվազելու իրա ըլլալով, բարթալցիներն³¹ ասոր առաջքն առնելու համար գյուրին համբա մը գտեր են. երիտասարդները ծեծելով կամուսնացնեն կոր:

Երիտասարդին մեկը Քարթալ ասն մը մեջ սենյակ մը վարձեր կը բնակե եղեր: Այս ասնց աիրուհին կուզե եղեր ազգիկը այս երիտասարդին աալ: Երկու շարաթ առաջ կիրակի դիշեր մը հիշչալ առնը հյուրերով կը լեցնի:

— Ճանրմ, թագավոր ազան ո՞ւր է, ինչո՞ւ չի գար, փետա ըլլալիք մարդը այսչափ ուշ մնալո՞ւ է մի:

— Ուր է նե՛ հարկավ հիմա կուգա:

Ժամը երկու կըլլա, երիտասարդը տուն կուգա պատկելու:

— Ծ՞օ՞, հրամաններ, թագավոր ազա, սանկ նսանցի ք, ո՞ւր մնացիք. եղբայր:

— Քիչ մը գործ ունեի այսօր, ներեցն՛ք. հիմա ալ սենյակս պիտի բաշտիմ, սրովհետեւ մինչև ժամը չոթը դիք ունիմ:

— Ի՞նչ կըսեր, թագավոր ազա՛, մեզի կը ծաղրե՛ր կոր:

— Ծաղրելու ի՞նչ կա:

— Բազմութենե շեռ ախորժիր նե՛ մենք կերթանք:

— Բազմութեանը ի՞նչ վնաս ունի իմ դիր գրելուս:

— Քահանան հիմա պիտի գա:

— Քահանան ի՞նչ գործ ունի...

— Տեր ողորմչա՛, պատկը ո՞վ պիտի ընե:

— Ի՞նչպես պատկ... հարսնի՛ք ունիք:

— Ճանրմ, ինչո՞ւ ասանկ կը խոսիք, դուք չե՞ք կարգվիք կոր:

— Ծ՛ս մի... խապար շունիմ:

— Խապար շունի՞ս մի:

— Ամենևին:

Զաթ... բաթ...

— Խապար շունի՞ս մի...

— Ինչո՞ւ կը դարնեք կոր...

Զաթ... բաթ...

— Այ, աչ, աչ...

— Խապար շունի՞ս հե...

— Ծո՛ Կարապետ, ինչո՞ւ կեցեր ես, դուն ալ շղարնե՞ս... Մարկոս,

Քորոս, դարկե՛ք...

— Այ, աչ, աչ, աչ... Թող տվեք, պիտի մեռցնե՞ք զիս... խապար ունիմ, սննիմ, փեսա պիտի ըլլամ, մտոցեր էի...

— Հարսին ձեռքն բռնե՛ նայիմ:

— Բռնեցի:

— Մանկ եկուր նայիմ:

— Ծկա:

— Առջեզ նայե:

— Նայեցա... օֆ... օֆ... ոսկորներս շարդվեցան...

— Մինչև ցմահ տե՛ր ես, կը հարցնեք քահանան:

— Զեմ, շեմ, կը պտուս փեւան:

— Զե՞ս մի...

Ռաթ... բշտթ... բաթ...

— Խաման կը տեսնա՞ս կոր...

— Տեր եմ, տեր եմ, մինչև ցմահ տեր եմ... մահվընես ետքն ալ տեր եմ,

եւ ըսելիք ունի՞ր:

— Ապրիս, տղաս... ձանրմ, փեսանիս հում տղա չէ ամա, դինքը դիւն

անողներ կան:

Ասակի արարողութիւնը կամ լավ եւ ծեծի արարողութիւնը կը կոչուի: Սքանաթի³² ա՛յ կայնելու կարողութիւն շունենալով, բաղմոցի մը վրա կը պսակի: Հետեւալ օրը կանուխ կելնեք բողոք մը կը հրե ու կրօն. կը ներկայացունե խնդրելով, որ սա ծեծի պսակը լուծեն:

Պրթալի քահանան պատուազօր կրօնական մ՛է, և մինչև հիմա ալ ապօրինի կործի մը մեջ դտնված շղարով, կը հուսացվի, որ այս պսակի պատուազօրութիւնը ուրիշի մը վրա ծանրանա:

Տե՛րք, կրօն. ժողովնիս քանի տարի պիտի զբաղվի այս խնդրով:

Արևելյան խնդիրը կարծես յուր քաղաքական կերպարանքը մերկացած ու հաշակի վերաբերյալ խնդիր մը դարձավ. յուրաքանչյուր կառավարութիւն յուր հաշակին համեմատ կուզէ ձեռն, կտրել զայն. միայն մեր հաշակը ձայն չունի...

Առակով խոսիմք:

Ինչպէս որ ես իմ բալթոս լայն կուզեմ, դուն բովիինդ նեղ կուզես, ուրիշ մը երկար կուզես, ուրիշ մը կարճ, այնպէս ալ կառավարութիւնը կուզեն, որ այս Արևելյան քալրոն լայն, նեղ, կարճ և միանգամայն երկար ըլլա:

Որո՞ւ հաշակը պիտի դժուարենք:

Ամենուն ալ:

Եվ դիտե՛ք հազար հոգիի հաշակը կրող բալթո մը ձեռքը որչա՛փ գրծ-վար է...

Գիտեմ որ դիտեք, հաշարութիւն պայմանները կնքելու շտի դժվար է:

Եվ դարձյալ դիտե՛ք, հազար հոգիի հաշակով ձեռած բալթո մը ի՞նչ այ-լանդակ և խելքն մտքն շունցած հագուստ մը կըլլա:

Մենք հոս հաշարութիւն պայմանները կնքելու պրազած տեսնենք, մեր պաշտպան Անգղիան ալ քար մը կը գլխորէ:

Կը փափաքի՞ք, կըսես, որ սա Արևելյան խնդիրը միանգամ ընդմիշտ լուծվի:

Այո, կը փափաքինք:

Եթէ կը փափաքիք՝ Կիրիան ու Միտիլլին ինձի տվիք. Մակեդոնիան, Թե-սաղիան ու Եպիրոսն ալ Հունաստանի տվիք. Եգիպտոսն ու Թունիսը անկախ հրատարակեցէք, լմննա կրթա:

Ահա Անգլիո հաշակը:

Մյուս կառավարութիւննց հաշակներուն վրա երկուք բարակ խոսելու հարկ չկա:

Վերջապէս, ընթերցո՛ւ, սեպե թե սա Արևելյան խնդիրն այլեք բաշափ է: Հիմա սս բաշան անանկ վարպետութիւն մը եկելու է, որ, քերպիեով սիրողն ալ ուտե, քերպիեով սիրողն ալ ուտե, քաջախով սիրողն ալ ուտե, լիմոնով սիրողն ալ ուտե, լիմոնով շափ-րողն ալ ուտե:

Ատ ըլլալո՞ւ բան է:

Եթէ այսպէս է, հաշարութիւն պայմաններն ալ կնքվելու բան չէ, ա՛յլ է թե մեկ մարդու քնացք համեմատ եփվի բաշան:

Իրավ է, որ խղճմտանքը՝ վերցած է աշխարհես...

Սա Սերվիո ու Գարատաղին էլնել՝ պատերազմական ծախք ուզելնուն ի՞նչ
կըսեր:

Շրտալիք խոսելով, եթե նա ըլլայի՝ երեսս չէր բռներ:

Սերվիան ու Գարատաղը գրեթե մեր կառավարութեան զավակներն էին.
մենք իրենց հետ այնպես վարվեցանք՝ ինչպես որ կը վարվի հայր մը իր զա-
վակաց հետ: Մեզի դեմ ուրք էլնելնին ու ձևօք վերցնելնին հերիք չէր, հիմա ալ
ելեր ստակ կուզեն, մտքերնեն ըսելով.

— Հայր, մենք քու խոսքդ մտիկ չըրինք, քեզի դեմ ապստամբեցանք,
ստառ ըսինք, խոսքերնիս չըռնեցինք. ծեծեցինք, ծեծվեցանք, վերջապես քու
կտկորդդ սխմեցինք, սառի քու պարտքդ է հիմա մեզի ստակ տալ:

Ասոնք պարզապես ստակ վաստկելու էլեր են, եղբայր:

Իսկ մինք չենք կարծեր, որ կառավարութեանն ստակ տա ստոնց. սրով-
հետե եթե սենեմար, ամիլի իր հնազանդ հպատակացը կուտար, քան թե
անհնազանդ զավակացը:

Մենք հոս անօթութենն մեռնինք, անգին Սերվիան ու Գարատաղն ուկի-
ներով խաղան:

Պարտ տնձին կը համարիմ ընթերցողացս ծանուցանել, որ հանդիտա
ըլլան, և մարերնեն քան մը շանցունեն Ռուսիո բռնակին ու Անգլիո տորմի-
դին Պուլսո առջև գտնվելուն վրա. ստոնք բարեկամարար եկած են:

Կրնամ ըսել, որ մեր մտքն շարութեան կանցնի, տնտեց մտքն շանցնիք:

Այս տողերը գրելու հարկ ալ չկա, որովհետե եթե Գարդանելի նեղուցը
վեց անգլիական գրահավոր շկնիք, Ռուսիա մաշրաբաղարիս աշուշտի չէր
մտակնար, ինչպես որ Անգլիան ալ իր վեց գրահավորները Գարդանելեն չէր
անցուներ՝ եթե Ռուսիան մեզի աշուշտի շմտակնար: Եվ որովհետե մին բարե-
կամութեամբ մտակցով մեզի, մյուսը չէր կրնար իր բարեկամութեանը չհայտ-
նել ու մեզմն հետու մտար: Ի՞նչ կուզեր, աշուշտան օրս բարեկամներու մեզ
մեացինք:

Անտված գմիկ իրարմն շրտնե, բարեկամութեաննիս հաստատ և ան-
ստան պահե, մեր բարեկամաց երկար օրեր պարգեն, անտեց մեկ օրը հա-
զար ընե. մեկտեղ տղեկ օրեր անցունենք... Աստված Ավոտրիայի ալ ասանկ
բարեկամներ շնորհե...

Աղերսանդրիային կը գրեն թե՛ Լոյսատական արժեթուղթ ունեցողները ժողով մ'ընկելով, պատվիրակներ ընտրեցին, որպեսզի Եգիպտոսի ելմտական վիճակը դեսպանախորհրդին ներկայեն:

Նախ և առաջ՝ Եգիպտոսի ելմտական վիճակը դեսպանական խորհրդին ներկայանալու բան չէ... որովհետև Եգիպտոսի ելմտական վիճակը քրիստոնյա չէ, որ բարվոքմանը աշխատվի:

Երկրորդ՝ դեսպանախորհուրդը պիտավորաբար Փարիզի դաշնադրութեան վերաբերյալ խնդրոց պահելու ստաշտն ունենալով՝ և Եգիպտոսի ելմտական վիճակը Փարիզի դաշնադրութեան մէջ նշանակված չլլալով, Եգիպտոսի ելմտական վիճակը դեսպանախորհրդին ներկայանալու իրավունք չունի:

Յրրորդ՝ Եգիպտոսի ելմտական վիճակը նմն ազեկ չէ, իբրև հաղվապետ մեկ վիճակ մը՝ ավելի Փարիզի արվեստահանգեսին ներկայանալու է, քան թի Պատենի դեսպանախորհրդին:

Չորրորդ՝ Լին որ մը դեսպանախորհրդո մ'առջև ելմտական վիճակ մը ներկայանալ հարկ չլլա, Եգիպտոսի ելմտական վիճակը թո՛ղ տեղը հանգիստ նստի. մեր ելմտական վիճակը նախ և առաջ պիտի ներկայանա հոն՝ իբրև մեծ Եգիպտոսի ելմտական վիճակին...



Ազեկ միտքս ինկավ:

Վարդավան էֆենտի և Օրթադուղի³⁴ Թաարոնի խմբին ելմտական վիճակները չեմ կարծեր, որ Եգիպտոսի ելմտական վիճակեն ազեկ ըլլան:

Պատիվ ունեցա պիշեր մը Օրթադուղի Թաարոնը երթալու:

Ներկայացումը Քաթերին Հովարտ էր³⁵: Դերասանաց թիվը հանդիսականաց թիվին ավելի էր. հետևաբար դերասանները կը քաջալիքին զհանդիսականս, մինչդեռ ասոնց ստրաքն էր զանոնք քաջալիքի:

Դերասանաց ընթացքն կռահեցի, որ դժոճ էին, և սակայն հաստատամըտութեամբ կը շարունակին իրենց ներկայացումներն ու վնասները:

Կերևա, որ ներկայացված խաղերը պշուղացվոց ճաշակին չեն համաստատասխաներ. եթե վիսքի կամ րեկֆայլի³⁶ վերաբերյալ ներկայացումներ տրվին, թե՛ դերասանները կը վստակին, թե՛ հանդիսականները և թե՛ դուրսը:

Վերջն իմացանք, որ Օրթադուղի Թաղ. Խորհուրդն³⁷ առաջարկիք է թուղխաղացողներուն, որ դոնե շաքաթը աճում մ'ալ ի նպատակ պշուղի վարժարանին վիսք խաղան:

Եթե այս առաջարկութունն ընդունվի, Թաարոնին դոները կը գոցվին և գեղացիք ալ հակամայս թաարոն երթալի կը խալսին:

